

# XI

## ԳԻՏՈՒԹՅՈՒՆ<sup>1</sup>

Գիտությունը մարդու մտավոր գարգացման մեջ վերջին քայլն է, և այն կարելի է համարել մարդկային մշակույթի բարձրագույն և առավել բնորոշ նվաճումը։ Այն առավել ուշ շրջանի և ամենակատարյալ արդյունքն է, որ կարող էր զարգանալ միմիայն հատուկ պայմանների առկայությամբ։ Գիտության հասկացությունն անգամ իր յուրահատուկ իմաստով գոյություն չուներ հույն մեծագույն մտածողների՝ պյութագորականների և ատոմիստների, Պլատոնի և Արիստոտելի ժամանակներից առաջ։ Իսկ այս առաջին հասկացությունը հետագա հարյուրամյակներում ասես մոռացվեց ու մթագնեց։ Այն հարկ եղավ վերահայտնագործել և վերականգնել Վերածննդի դարաշրջանում։ Այդ վերահայտնագործումից հետո գիտության հաղթարշավը, թվում է, լիակատար և աներկեա էր։ Ժամանակակից աշխարհում գոյություն չունի որևէ այլ ուժ, որ կարող է համեմատվել գիտական մտքի հետ։ Այն մնում է մեր մարդկային ողջ գործունեության բարձրակետն ու արդյունքը, մարդկության պատության վերջին գլուխը և մարդու փիլիսոփայության ամենակարեւոր առարկան։

Կարելի է բանավիճել գիտության արդյունքների կամ նրա գլխավոր սկզբունքների մասին, մինչդեռ նրա ընդհանուր ֆունկցիան, թվում է, անվիճելի է։ Գիտությունն է, որ մեզ հաստատուն աշխարհի հավաստիություն է տալիս։ Գիտության նկատմամբ կարելի է կիրառել Արքիմեդեսի ասույթը՝ (ծծ մօι ποῦ στῶ καὶ κόδσμον κινήσω) («Տվեք ինձ հենման կետ և ես կշրջեմ աշխարհը»)։ Փոփոխական տիեզերքում գիտական միտքը նշում է կայուն կետերը, անշարժ

բևեռները։ Հունարենում նույնիսկ *epistemē*\* տերմինը ստուգաբանորեն արտածվում է մի արմատից, որ նշանակում է հաստատունություն և կայունություն։ Գիտական պրոցեսը հանդեցնում է կայուն հավասարակշռության, մեր զգայությունների ու մտքերի աշխարհի կայունության և համախմբման։

Մյուս կողմից՝ սույն խնդիրն իրականացնողը միայն գիտությունը չէ։ Մեր ժամանակակից իմացաբանության մեջ՝ թե էմպիրիկ և թե ռացիոնալիստական դպրոցներում, մենք հաճախ հանդիպում ենք այն ըմբռնմանը, որ մարդկային փորձառության առաջին տվյալները լիովին քառային վիճակում են։ Թվում է՝ անգամ Կանտը «Զուտ բանականության քննադատության» առաջին գլուխներում ենում էր այս նախադրյալից։ Փորձը, ասում էր նա, անկասկած մեր հասկացողության առաջին արդյունքն է։ Բայց այն պարզագույն փաստ չէ. այն երկու հակադիր գործոնների՝ նյութի և ձևի համակցությունն է։ Նյութական գործոնը տրված է մեր զգայական ընկալումներում։ Փորձալ գործոնը ներկայացվում է մեր գիտական հասկացություններում։ Այս հասկացությունները, զուտ բանականության հասկացությունները երևույթներին հաղորդում են իրենց սինթետիկ միասնությունը։ Այն, ինչ անվանում ենք օբյեկտի միասնություն, այլ բան չէ, քան մեր գիտակցության փորձալ միասնությունը մեր բազմազան պատկերացումների սինթեզի մեջ։ Եվ միայն այնժամ կարող ենք ասել, որ մենք ճանաչում ենք օբյեկտը, երբ պատկերացումների բազմազանությունից ստեղծել ենք սինթետիկ միասնություն։ Հետևաբար, Կանտի համար մարդկային գիտելիքի օբյեկտիվության ողջ հարցը անքակտելիորեն կապված է գիտության փաստի հետ։ Նրա տրանսցենդենտալ էսթետիկան առնչվում է զուտ մաթեմատիկային։ Նրա տրանսցենդենտալ վերլուծությունը փորձում է բացատրել մաթեմատիկական բնագիտության փաստի առկայությունը։ Սակայն մարդկային մշակույթի փիլիսոփայությունը պետք է խորամուխ լինի սույն խնդրի մեջ՝ ընդհուպ

\* Իմացություն։

մինչև առավել հեռավոր աղբյուրը: Օբյեկտիվ աշխարհում մարդն ապրել է շատ ավելի վաղ, քան ապրում է գիտական աշխարհում: Նույնիսկ նախքան նա կհակվեր դեպի գիտությունը, նրա փորձը սոսկ զգայական տպավորությունների անձև զանգված չէր: Այս կազմակերպված և հոդաբաշխ փորձ էր՝ օժտված որոշակի կառուցվածքով: Բայց այն հասկացությունները, որ այս աշխարհին հաղորդում են սինթետիկ միասնություն, բնավ էլ նույն տեսակի կամ նույն մակարդակի չեն, ինչ մեր գիտական հասկացությունները: Դրանք դիցաբանական կամ լեզվաբանական հասկացություններ են: Եթե վերլուծենք այդ հասկացությունները, ապա կպարզենք, որ դրանք բնավ պարզ և «պարզունակ» չեն: Երեսութների առաջին դասակարգումները, որ առկա են լեզվի կամ դիցաբանության մեջ, որոշ իմաստով շատ ավելի բարդ և նրբարդեստ են, քան մեր գիտական դասակարգումները: Գիտությունը սկսվում է պարզության փնտրտուքից: *Simplex sigillum veri\**. ահա նրա հիմնական կարգախոսներից մեկը: Այս տրամաբանական պարզությունը, սակայն, *terminus ad quem* է, և *ոչ terminus a quo\*\**: Այն ավարտ է և *ոչ սկիզբ*: *Մարդկային մշակույթը սկսվում է ոգու շատ ավելի բարդ ու լաճճված վիճակից*: *Մեր գրեթե բոլոր բնական գիտությունները ստիպված էին անցնելու այս փուլը*: Գիտական մտքի պատմության մեջ ալքիմիան նախորդել է քիմիային, աստղաբաշխությունը՝ աստղագիտությանը: Գիտությունը կարող էր այս առաջին քայլերից վեր բարձրանալ սոսկ ներմուծելով նոր չափորոշիչներ, ճշմարտության այլ տրամաբանական չափանիշներ: Ճշմարտությունը, հայտարարում է նա, անհասանելի է քանի դեռ մարդը իրեն սահմանափակում է իր անմիջական փորձի նեղ շրջանակով, գիտարկվող փաստերով: Առանձին և մեկուսացած փաստեր նկարագրելու փոխարեն գիտությունը ձգտում է մեզ համակողմանի պատկերացում ընձեռել: Այնինչ այդ

\* «Պարզությունը ճշմարտության նշան է» (լատ.):

\*\* «Մահման մինչև ինչ-որ բան. սահման՝ սկսած ինչ-որ բանից» (լատ.):

պատկերացումը հնարավոր չէ ձեռք բերել սոսկ մեր փորձի ծավալմամբ, ընդլայնմամբ և հարստացմամբ։ Անհրաժեշտ է կարգավորման նոր սկզբունք, ինտելեկտուալ մեկնաբանության նոր ձեւ։ Լեզուն մարդու առաջին փորձն է կապակցելու իր գգայական ընկալումների աշխարհը։ Այս միտումը մարդկային խոսքի հիմնական հատկություններից է։ Որոշ լեզվաբաններ նույնիսկ անհրաժեշտ էին համարում ընդունել մարդու մեջ յուրահատուկ դասակարգող բնազդի գոյությունը՝ մարդկային խոսքի իրողությունը և կառուցվածքը բացատրելու համար։ «Մարդը, — ասում է Օտտո Եսպերսնը, —

դասակարգող կենդանի է. որոշ իմաստով կարելի է ասել, որ խոսելու ողջ պրոցեսը այլ բան չէ, քան երեսույթների դասակարգում ըստ տարբեր դասերի, որոնց մեջ առկա չէ երկու՝ բոլոր առումներով նույնական երեսույթ՝ կախված նմանությունների և տարբերությունների ընկալման զորությունից։ Անվանման պրոցեսում մենք համոզվում ենք նմանությունը տեսնելու և երեսույթների նմանությունը անունների նմանության միջոցով արտահայտելու նույն անբեկանելի և անչափ օգտակար միտումի գոյության մեջ»<sup>3</sup>

Բայց այն, ինչ գիտությունը փնտրում է երեսույթների մեջ, շատ ավելին է, քան նմանությունը, այն է՝ կարգավորումը։ Առաջին դասակարգումները, որ մենք գտնում ենք մարդկային խոսքում, խիստ տեսական նպատակ չունեն։ Օբյեկտների անվանումները կատարում են իրենց առաջադրանքը, եթե նրանք հնարավորություն են տալիս մեզ հաղորդելու մեր մտքերը և համաձայնեցնելու մեր պրակտիկ գործունեությունը։ Դրանք ունեն նպատակաբանական ֆունկցիա, որը հետզհետե վերածվում է ավելի օբյեկտիվ, «ներկայացուցչական» ֆունկցայի<sup>4</sup>։ Յուրաքանչյուր բացահայտ նմանություն տարբեր երեսույթների միջև՝ բավարար է դրանց նույն անունով նշանակելու համար։ Որոշ լեզուներում թիթեռը ներկայացվում է որպես թուչուն, կամ կետը՝ որպես ձուկ։ Երբ գիտությունը սկսեց իր առաջին դասակարգումները, նա պետք է ճշգրտեր և հաղթահարեր այս

մակերեսային նմանությունները։ Գիտական տերմինները կամայականորեն չեն ստեղծվում. դրանք հետևում են դասակարգման որոշակի սկզբունքի։ Համաձայնեցված և համակարգված տերմինաբանության ստեղծումը բնավ էլ գիտության երկրորդական որակներից չէ, այլ նրա հատուկ և անհրաժեշտ տարրերից։ Երբ Լիննեյը ստեղծում էր իր «*Philosophia botanica*»-ն, նա պետք է ընդդիմանար այն առարկությանը, ըստ որի՝ այն, ինչ տրված է, ոչ թե բնական, այլ արհեստական համակարգ է։ Սակայն դասակարգման բոլոր համակարգերն էլ արհեստական են։ Բնությունը, որպես այդպիսին, պարունակում է սոսկ առանձին և տարբերակված երեսույթներ։ Երբ մենք ամփոփում ենք այդ երեսույթները հասկացությունների, դասերի և ընդհանուր կանոնների ներքո, մենք չենք նկարագրում բնության փաստերը։ Ամեն համակարգ արվեստի գործ է, գիտակցված ստեղծագործական գործունեության արդյունք։ Անգամ հետագա, այսպես կոչված «բնական» կենսաբանական համակարգերը, որ հակադիր էին Լիննեյի համակարգին, հարկադրված էին օգտագործելու նոր հասկացական տարրեր։ Դրանք հիմնված էին Էվոլյուցիայի ընդհանուր տեսության վրա։ Սակայն Էվոլյուցիան ինքնին սոսկ բնական պատմության փաստ չէ. այն գիտական հիպոթեզ է, կարգավորող սկզբունք՝ բնական երեսույթների մեր գիտարկման և դասակարգման համար։ Դարվինի տեսությունը բացել է նոր և ավելի լայն հորիզոն, ներկայացրել օրգանական կյանքի երեսույթների ավելի լիարժեք ու ավելի կապակցված տեսողություն։ Սա բնավ էլ կոչված չէր հերքելու Լիննեյի համակարգը, որը հեղինակի կողմից միշտ նախնական քայլ է գիտարկվել։ Նա լիովին գիտակցում էր, որ որոշ իմաստով ինքը ընդամենը ստեղծել է նոր բուսաբանական տերմինաբանություն, բայց և համոզված էր, որ այդ տերմինաբանությունն ուներ թե խոսքային և թե իրական արժեք։ «*Nomina si nescis,— ասում էր նա,— perit et cognito rerum*»\*:

---

\* «Եթե չես ճանաչում անունները, ապա չես ճանաչում նաև իրերը» (լատ.):

Այս տեսակետից, թվում է, լեզվի և գիտության միջև տարանջատում չկա: Մեր լեզվական և առաջին գիտական անվանումները կարելի է գիտարկել որպես նույն դասակարգող բնագդի արդյունք և դրսերում: Այն, ինչ անգիտակցաբար տրված է լեզվում, գիտակցաբար նախատեսվում և մեթոդաբար իրականացվում է գիտական պրոցեսում: Իր զարգացման առաջին փուլերում գիտությունը համակերպվում էր իրերի անվանումների կիրառությանը այն իմաստով, որով գրանք օգտագործվում էին առօրյա խոսքում: Դրանք կարելի էր օգտագործել իրերի հիմնական տարրերը կամ հատկանիշները նկարագրելու համար: Բնափիլիսոփայության առաջին հունական համակարգերում՝ Արիստոտելի մոտ հայտնաբերում ենք, որ այդ ընդհանրական անվանումները դեռևս հսկայական ազդեցություն ունեն գիտական մտքի վրա<sup>5</sup>: Բայց հունական մտքում այս ուժը բնավ էլ միակը և կամ գերիշխողը չէ: Պյութագորասի և առաջին պյութագորականների ժամանակներում հունական փիլիսոփայությունը հայտնագործեց նոր լեզու՝ թվերի լեզուն: Այս հայտնագործությունը նշանագործում է գիտության մեր արդիական ըմբռնման ծնունդը:

Մարդկության առաջին մեծագույն բացահայտումներից էր այն, որ բնության երեսույթների, մոլորակների շարժման, արեկի կամ լուսնի պտույտի մեջ գոյություն ունի որոշակի կանոնավորություն, միասնականություն: Անգամ դիցաբանական մտածողության մեջ այս փորձը գտել է իր հաստատումը և իրեն բնորոշ արտահայտություն է ստացել: Այստեղ մենք հանդիպում ենք բնության համընդհանուր կարգի գաղափարի առաջին նշաններին<sup>6</sup>: Դեռևս Պյութագորասի ժամանակներից շատ ավելի վաղ այս կարգը նկարագրվել է ոչ միայն դիցաբանական տերմիններով, այլ նաև մաթեմատիկական սիմվոլներով: Դիցաբանական ու մաթեմատիկական լեզուները անչափ զարմանալիորեն փոխներթափանցում են բարելոնյան աստղագիտության առաջին համակարգերում, որոնց սկզբնավորման փուլը Ք.ա. 3800 թվականն է: Աստղային տարրեր խմբերի և տասներկու կենդանակերպերի բաժանումը ներմուծվել է բարելոնյան աստղագետնե-

րի կողմից: Այս արդյունքներին հասնել հնարավոր չէր լինի առանց նոր տեսական բազիսի: Մինչդեռ թվի առաջին փիլիսոփայությունը ստեղծելու համար առավել համարձակ ընդհանրացումներ էին անհրաժեշտ: Պյութագորականները առաջինն էին, որ թիվը ընկալեցին որպես համընդգրկուն, իրոք ունիվերսալ տարր: Նրա կիրառումը այլևս չէր սահմանափակվում հետազոտության առանձնահատուկ դաշտով: Այն տարածվում էր կեցության ողջ ոլորտի վրա: Երբ Պյութագորասը կատարեց իր առաջին խոչոր հայտնագործությունը, երբ նա գտավ ձայնի բարձրության կախվածությունը թրթուացող լարերի երկարությունից, ապա ոչ թե այդ փաստն ինքնին, այլ այդ փաստի մեկնաբանությունը վճռուրոց գարձավ փիլիսոփայական և մաթեմատիկական մտքի ողջ հետագա կողմնորոշման համար: Սույն հայտնագործությունը Պյութագորասը առանձին երեսույթ չէր համարում: Այստեղ թվում էր՝ բացահայտվել է ամենախոր գաղտնիքներից մեկը՝ գեղեցկության գաղտնիքը: Հունական մտքի համար գեղեցկությունը միշտ ունեցել է լիովին օբյեկտիվ նշանակություն: Գեղեցկությունը ճշմարտություն է: այն իրականության հիմնական հատկանիշն է: Եթե գեղեցկությունը, որ մենք ընկալում ենք հնչյունների հետ ներդաշնակության մեջ, հանգում է պարզ թվային հարաբերակցության, ապա թիվն է մեզ համար բացահայտում տիեզերական կարգի հիմնական կառուցվածքը: «Թիվը, – ասվում է պյութագորականների մի տեքստում, – մարդկային մտքի ղեկավարն ու տերն է: Առանց նրա զորության ամեն բան կմնար մութ և խճողված»<sup>7</sup>: Մենք ապրում ենք ոչ թե ճշմարտության, այլ կեղծիքի և պատրանքի աշխարհում: Թվի և միայն ու միայն թվի մեջ ենք մենք գտնում մտահասու ունիվերսումը:

Պյութագորական մտածողների համար միանգամայն անընդունելի էր ըմբռնումը, ըստ որի՝ այս ունիվերսումը դիսկուրսի ունիվերսում է և որ թվի աշխարհը խորհրդանշային աշխարհ է: Այստեղ, ինչպես և մյուս բոլոր գեպերում, սիմվոլը և առարկան խստորեն սահմանափառ չէին: Սիմվոլը ոչ միայն բացատրում էր օբյեկտը. այն որոշակիո-

րեն փոխարինում էր նրան: Իրերը ոչ միայն հարաբերակց-  
վում կամ արտահայտվում էին թվերով. նրանք իրենք էլ  
թվեր էին: Մենք այլևս չենք պաշտպանում պյութագորա-  
կան թեզը՝ թվի սուբստանցական իրականության մասին,  
չենք դիտարկում այն իրեր իրականության բուն միջուկ:  
Սակայն մենք պետք է ընդունենք, որ թիվը մարդկային  
իմացության հիմնական փունկցիաներից է, անհրաժեշտ  
քայլ օբյեկտիվացման մեծ պրոցեսում: Այս պրոցեսը սկսվել  
է լեզվի մեջ, բայց դիտության մեջ այն ձեռք է բերել միան-  
գամայն նոր տեսք: Քանզի թվի սիմվոլիզմը միանգամայն  
այլ տեսակ է, քան խոսքի սիմվոլիզմը: Լեզվում են ի հայտ  
գալիս դասակարգման առաջին ջանքերը, որոնք, սակայն,  
դեռևս փոխհամաձայնեցված չեն միմյանց հետ: Նրանք  
իրական համակարգայնության հանգեցնել չեն կարող: Զէ՞  
որ իրենք՝ սիմվոլները, լեզվում չունեն որոշակի կանոնավոր  
կարգ: Լեզվաբանական յուրաքանչյուր առանձին եզրույթ  
ունի յուրահատուկ «նշանակության ոլորտ»: Այն, ինչպես  
նշում է Գարդիները, «լույսի շող է, որ լուսավորում է այն  
դաշտի նախ այս, ապա նաև մեկ այլ մասը, որի ներսում  
իրը կամ ավելի շուտ՝ իրերի բարդ համակցությունը նշա-  
նակվում են նախադասությամբ»<sup>8</sup>: Բայց լույսի այս բոլոր  
տարրեր շողերը ընդհանուր կիզակետ չունեն: Դրանք  
ցըված ու մեկուսացված են: «Բազմազանության սինթեզ-  
ման» մեջ յուրաքանչյուր նոր բառ նոր մեկնարկ է կատա-  
րում:

Իրավիճակը լիովին փոխվում է, եթե մուտք ենք գործում  
թվերի ոլորտ: Անկարելի է խոսել առանձին, մեկուսի թվերի  
մասին: Թվի չությունը մշտապես հարաբերական է և ոչ՝  
բացարձակ: Առանձին թիվը սոսկ առանձին մի տեղ է՝ ընդ-  
հանուր համակարգի մեջ: Այն չունի սեփական կեցություն,  
ոչ էլ ինքնաբավ իրականություն: Նրա իմաստը որոշվում է  
այն դիրքով, որը նա գրավում է ողջ թվային համակար-  
գում: Բնական թվերի շարքը անորոշ շարք է: Բայց այս ան-  
որոշությունը չի սահմանափակում մեր տեսական իմացու-  
թյունը: Այն չի նշանակում անորոշություն՝ αρείρον պլատոն-  
յան իմաստով, այլ՝ միանգամայն հակառակը: Թվերի առա-

չաղիմությունը չի հանգում արտաքին սահմանափակման, «վերջին սահմանին»: Այստեղ, սակայն, առկա է սահմանափակում ներքին տրամաբանական սկզբունքով: Բոլոր եղբերը միմյանց հետ միահյուսված են մեկ ընդհանուր կապով: Դրանք ծագում են միևնույն ստեղծարար հարաբերությունից, հարաբերություն, որը թիվը կապում է իր անմիջական հաջորդին ( $n+1$ ): Այս շատ պարզ հարաբերությունից կարելի է ածանցել ամբողջ թվերի բոլոր հատկությունները: Այս համակարգի տարրերակիչ նշանը և մեծագույն տրամաբանական առավելությունը նրա լիակատար թափանցիկությունն է: Մեր ժամանակակից՝ թրեգեի ու Ռասսելի, Պեանոյի ու Դեդեկինդի տեսություններում թիվը կորցրել է իր բոլոր գոյաբանական գաղտնիքները: Մենք այն ընկալում ենք իբրև նոր և հզոր սիմվոլիզմ, քանզի իր բոլոր գիտական արդյունքներով որոշակիորեն գերազանցում է խոսքի սիմվոլիզմին: Զէ՞ որ այստեղ առկա են ոչ թե առանձին բառեր, այլ տերմիններ, որ շարված են միևնույն հիմնական պլանի համաձայն, ուստի և պարզորոշ ու որոշակիորեն ի ցույց են դնում կառուցվածքային օրենքը:

Այսուհանդերձ, Պյութագորասի հայտնագործությունը սոսկ առաջին քայլն էր բնական գիտությունների գարգացման մեջ: Պյութագորյան ողջ տեսությունը անսպասելիորեն հարցականի տակ դրվեց նոր փաստի հետևանքով: Երբ պյութագորականները հայտնաբերեցին, որ ուղղանկյուն եռանկյան այն կողմը, որ ընկած է ուղիղ անկյան դիմաց, համեմատական չէ մյուս երկու կողմերի հետ, նրանց առջև հառնեց միանգամայն նոր խնդիր: Հունական մտքի ողջ պատմության մեջ, հատկապես Պլատոնի տրամախոսություններում մենք զգում ենք այդ դիլեմի խոր արձագանքները: Այն նշում է հունական մաթեմատիկայի իրական ճգնաժամը: Ոչ մի հին մտածող չէր կարող այս խնդիրը լուծել արդի եղանակով, այն է՝ ներմուծել այսպես կոչված «իռացիոնալ թվեր»: Հունական տրամաբանության և մաթեմատիկայի տեսանկյունից իռացիոնալ թվերը հակասություն են տերմինի մեջ: Նրանք ձբրդուն էին, մի բան, որ անկարելի էր մտածել կամ արտաբերել<sup>9</sup>: Քանի որ թիվը բնորոշվել է

իբրև ամբողջ մեծություն կամ այդ ամբողջ մեծությունների միջև հարաբերություն, ապա անչափելի հատվածը մի հատված էր, որ չի ընդունում ոչ մի թվային արտահայտություն, որ արհամարհում և անտեսում է թվի ողջ տրամաբանական ուժը։ Այն, ինչ պյութագորականները թվի մեջ փնտրում էին և ինչ գտան, ամեն տեսակի կեցության ու գիտելիքի, ընկալման, ինտուիցիայի ու մտքի բոլոր ձեերի կատարյալ ներդաշնակությունն էր։ Այդուհետ, թվաբանությունը, երկրաչափությունը, ֆիզիկան, երաժշտությունը, աստղագիտությունը ասես միասնական և փոխհամաձայնեցված ամբողջություն էին կազմում։ Երկնքում և գետնի վրա բոլոր իրերը դարձան «ներդաշնակություն և թիվ»<sup>10</sup>։ Անչափելի հատվածների հայտնագործումը, սակայն, այս դրույթի հերքումն էր։ Այդուհետ այլևս իրական ներդաշնակություն չկար թվաբանության և երկրաչափության, դիսկրետ թվերի և անվերջանալի քանակության ոլորտների միջև։

Սույն ներդաշնակությունը վերականգնելու համար մաթեմատիկական և փիլիսոփայական մտքի բազմադարյա ջանքեր պահանջվեցին։ Մաթեմատիկական կոնտինուումի տրամաբանական տեսությունը մաթեմատիկական մտքի վերջին նվաճումներից է<sup>11</sup>։ Իսկ առանց նման տեսության նոր՝ կոտորակային, իռացիոնալ և այլ թվերի ներմուծումը մշտապես անչափ խնդրահարույց և հանդուգն ձեռնարկում էր թվում։ Եթե մարդկային ոգին իր սեփական զորությամբ կարողանար կամայականորեն ստեղծել իրերի նոր ոլորտ, մեզ հարկ կլիներ փոխել մեր բոլոր պատկերացումները օբյեկտիվ ճշմարտության վերաբերյալ։ Բայց այստեղ ևս երկնարանքը անզոր է դառնում, երբ մենք նկատի ենք առնում թվի խորհրդանշային բնույթը։ Այս առումով ակնհայտ է դառնում, որ թվերի նոր դասերի ներմուծմամբ մենք ոչ թե նոր օբյեկտներ ենք ստեղծում, այլ նոր սիմվոլներ։ Այս առումով բնական թվերը բնավ չեն տարբերվում կոտորակային կամ իռացիոնալ թվերից։ Նրանք ևս կոնկրետ իրերի, ֆիզիկական օբյեկտների նկարագրությունը կամ պատկերը չեն։ Ավելի շուտ դրանք չափազանց պարզ հարաբերություններ են արտահայտում։ Բնական թվերի ոլորտի ընդլայնումը,

նրանց տարածումը առավել ընդարձակ դաշտում նշանակում է սոսկ նոր սիմվոլների ներմուծում, որոնք ունակ են նկարագրելու ավելի բարձրակարգ հարաբերություններ: Նոր թվերը խորհրդանշում են ոչ թե պարզ հարաբերություններ, այլ «հարաբերությունների հարաբերություններ», «հարաբերությունների հարաբերությունների հարաբերություններ», և այլն: Այս ամենը չի հակասում ամբողջ թվերի ընույթին. այն լուսաբանում և հաստատում է այդ ընույթը: Մաթեմատիկական միտքը պետք է մի նոր գործիք գտներ՝ փակելու համար այն ճեղքվածքը, որ առկա էր ամբողջ թվերի, որ դիսկրետ մեծություններ են, և ֆիզիկական իրադարձությունների աշխարհի միջև, որ ներկայացնում է տարածության և ժամանակի կոնստինուում: Եթե թիվը լիներ «իր» *substantia quae in se est et per se concipitur\**, խնդիրը անլուծելի կլիներ: Բայց քանի որ այն սոսկ խորհրդանշային լեզու էր, ապա անհրաժեշտ էր հետևողականորեն զարգացնել այդ լեզվի բառապաշարը, ձևաբանությունը և շարահյուսությունը: Այստեղ պահանջվում էր ոչ թե թիվի ընույթի և էության, այլ միմիայն նշանակության փոփոխություն: Մաթեմատիկայի փիլիսոփայությունը պետք է ապացուցեր, որ նման փոփոխությունը երկիմաստության կամ հակասության չի հանգեցնում, որ քանակները, որ անկարելի է նշգրիտ արտահայտել ամբողջ թվերով կամ ամբողջ թվերի հարաբերություններով, լիովին հասկանալի ու արտահայտելի են դառնում նոր սիմվոլների ներմուծման շնորհիվ:

Արդի փիլիսոփայության առաջին խոչոր հայտնագործություններից է այն, որ բոլոր երկրաչափական հարցերը թույլ են տալիս նման ձևափոխում: Դեկարտի վերլուծական երկրաչափությունը տվել է տարածության և թվի միջև հարաբերության առաջին համոզիչ ապացույցը: Այդուհետ երկրաչափական լեզուն դադարեց հատուկ արտահայտություն լինելուց: Այն դարձավ շատ ավելի ընդհանուր լեզվի՝ *mathesis universalis*-ի բաղադրամասը: Բայց Դեկարտին այն դեռևս հնարավորություն չտվեց այդ ճանապարհով տիրել

\* «Առուբատանց, որ իր մեջ է և բովանդակում է իրեն» (լատ.):

Փիզիկական աշխարհին, մատերիայի և շարժման աշխարհին: Մաթեմատիկական ֆիզիկա զարգացնելու նրա փորձերը ձախողվեցին: Մեր ֆիզիկական աշխարհի նյութը կազմված է զգայական տվյալներից, իսկ այդ զգայական տվյալներում ներկայացվող համառ ու անփոփոխ փաստերը, թվում է, հակադրվում են Դեկարտի տրամաբանական ու ռացիոնալ մտածողության բոլոր ջանքերին: Նրա ֆիզիկան մնում է կամայական ենթադրությունների շղթա: Բայց եթե Դեկարտը՝ իրեւ ֆիզիկոս, կարող էր սխալվել իր միջոցների ընտրության մեջ, ապա նա չէր սխալվում իր հիմնական փիլիսոփայական նպատակի հարցում: Այսուհետ այդ նպատակը պարզորոշ ըմբռնելի և ամուր հաստատված էր: Իր բոլոր առանձին ճյուղերում ֆիզիկան ձգտում է միենույն կետին. այն փորձում է թվի վերահսկողությունը հաստատել բնական երևոյթների ողջ աշխարհի վրա:

Այս ընդհանուր մեթոդաբանական իդեալում մենք դասական և ժամանակակից ֆիզիկայի միջև որևէ հակասություն չենք տեսնում: Քվանտային մեխանիկան որոշ իմաստով իրական վերածնունդ է, դասական պյութագորական իդեալի նորացում և հաստատում: Սակայն այստեղ ես անհրաժեշտ էր շատ ավելի վերացական խորհրդանշային լեզու ներդնել: Երբ Դեմոկրիտոսը նկարագրում էր իր ատոմների կառուցվածքը, նա դիմում էր մեր զգայական փորձի աշխարհից վերցրած նմանություններին: Նա տալիս էր ատոմի նկարը, պատկերը, որոնք նման էին տիեզերքի սովորական օբյեկտներին: Ատոմները միմյանցից տարբերվում էին իրենց ձևով, չափով, իրենց համապատասխան բաղադրամասերով: Նրանց հարաբերակցությունը բացատրվում էր նյութական կապերով. առանձին ատոմները զինված էին կեռիկներով ու աչքերով, կորություններով ու գոգավորություններով, ինչը օժանդակում էր նրանց միահյուսմանը: Այս ողջ պատկերայնությունը, պատկերավոր լուսաբանումը անհետացել է ատոմի արդի տեսություններից: Ատոմի՝ Բորի մոդելում այս պատկերավոր լեզվից ոչինչ չի մնացել: Գիտությունը այլևս չի խոսում սովորական զգայական փորձի լեզվով. նա խոսում է պյութագորյան լեզվով: Թվի զուտ սիմվոլիկան

դուրս է մղում և հաղթահարում է առօրյա խոսքի սիմվոլիկան: Այժմ այս լեզվով կարելի է նկարագրել ոչ միայն մակրոկոսմոսը, այլ նաև միկրոկոսմոսը՝ ներատոմային երևույթների աշխարհը. սա ազդարարում է կատարելապես նոր համակարգային մեկնաբանության սկիզբը: «Սպեկտրալ վերլուծության հայտնագործումով, — գրել է իր «Ատոմի կառուցվածքը և սպեկտրալ գծերը»<sup>12</sup> գրքի առաջաբանում Առնոլդ Զոմմերֆելդը:—

Փիզիկայում հմտացած որևէ մեկը չէր երկմտում, որ ատոմի խնդիրը կլուծվի, երբ Փիզիկոսները սովորեն հասկանալ սպեկտրների լեզուն: Այնքան մեծաքանակ էր փաստական նյութը, որ կուտակվել էր 60 տարվա սպեկտրոսկոպիկ հետազոտությունների ընթացքում, որ սկզբում թվում էր, թե անհնար էր այն պարզաբանել: [...] Այն, ինչ մենք այժմ լսում ենք սպեկտրների լեզվում, իսկական «ոլորտների երաժշտություն» է ատոմի ներսում, համահունչ ինտեգրալ հարաբերակցություններ, կարգ ու ներդաշնակություն, որ դառնում են նույնիսկ ավելի կատարյալ՝ չնայած մեծ բազմազանությանը: [...] Սպեկտրալ գծերի և ատոմային տեսության բոլոր ինտեգրալ օրենքները սկզբնապես բխում են քվանտային տեսությունից: Հենց այս խորհրդագոր երգեհոնի վրա է Բնությունը նվազում իր սպեկտրների մեղեղին՝ այդ ոիթմին համապատասխան կարգավորելով ատոմների ու միջուկների կառուցվածքը»:

Քիմիայի պատմությունը գիտական լեզվի այդ դանդաղ վերափոխման լավագույն և առավել զարմանալի օրինակներից է: Քիմիան Փիզիկայից անհամեմատ ուշ է հասել «գիտության բարձունքներին»: Բնավ էլ նոր էմպիրիկ տվյալների անբավարարությունը չէր բազում հարյուրամյակներ խոչընդոտել քիմիական մտքի զարգացումը և քիմիան կաղապարել նախագիտական պատկերացումների շրջանակում: Եթե ուսումնասիրենք ալքիմիայի պատմությունը, կտեսնենք, որ ալքիմիկոսները օժտված էին դիտարկման ապշեցուցիչ տաղանդով: Նրանք կուտակել էին արթեքավոր փաստերի մի խոշոր գանգված, անմշակ նյութ, առանց որի

քիմիան դժվար թե կարողանար զարգանալ<sup>13</sup>: Բայց այն ձևը, որով այդ անմշակ նյութը ներկայացվում էր, լիովին անհամապատասխան էր: Երբ ալքիմիկոսը սկսեց նկարագրել իր դիտարկումները, նա իր տրամադրության տակ ոչ մի այլ գործիք չուներ, բացի կիսադիցարանական լեզվից, որ լի էր տարտամ և անհասկանալի տերմիններով: Նա խոսում էր փոխաբերություններով և այլաբանություններով, ոչ թե գիտական հասկացություններով: Այս տարտամ լեզուն իր կնիքն է թողել բնության նրա ողջ կոնցեպցիայի վրա: Բնությունը դարձել էր անորոշ հատկանիշների տիրույթ, որոնք հասկանալի էին սոսկ իրազեկներին, գիտակներին: Քիմիական մտքի նոր հոսանքը սկսվում է Վերածննդի դարաշրջանում: «Յատրոքիմիայի» դպրոցներում կենսաբանական ու բժշկական միտքը դառնում է գերակայող: Այսուհանդերձ, քիմիայի խնդիրների նկատմամբ ճշմարիտ գիտական մոտեցումը ձեւվորվեց սոսկ XVII դարում: Ուրեմն Բոյլի «Chymista scepticus» (1677) երկը քիմիայի ժամանակակից իդեալի առաջին խոշոր օրինակն է՝ հիմնված բնության և նրա օրենքների նոր ընդհանրական ըմբռնման վրա: Բայց անգամ այստեղ, նաև ֆլուգիստոնի տեսության հետագա զարգացման մեջ առկա է քիմիական պրոցեսների սոսկ որակական նկարագրությունը: Միայն XVIII դարի վերջին՝ Լավուազիեի դարաշրջանում, քիմիան սովորեց խոսել քանակական լեզվով: Հետայրու նկատելի է արագ առաջընթաց: Երբ Դալտոնը հայտնագործեց իր հավասար կամ բազմակի համամասնությունների օրենքը, քիմիայի համար նոր ուղի բացվեց: Հիմնովին ամրապնդվեց թվի գերիշխանությունը:

Այնուամենայնիվ, գեռևս պահպանվում էին քիմիական փորձի ընդարձակ ոլորտներ, որոնք գեռևս լիովին չէին ենթարկվում թվային կանոններին: Քիմիական տարրերի ցանկը սոսկ էմպիրիկ ցանկ էր. այն կախված չէր որևէ կայուն սկզբունքից և որոշակի համակարգ չէր ներկայացնում: Բայց անգամ այս վերջին արգելքը հաղթահարվեց տարրերի պարբերական համակարգի հայտնագործման չնորհիվ: Ցուրաքանչյուր տարր իր տեղը գտավ հետեղական համակարգում, և այդ տեղը նշվեց նրա ատոմական թվով: «Ճշմարիտ

ատոմական թիվը պարզապես թիվ է, որը նշում է տարրի դիրքը բնական համակարգում, երբ յուրաքանչյուր տարրի կարգը որոշվում է քիմիական հարաբերությունների հաշվառման միջոցով»: Հիմնվելով պարբերական համակարգի վրա՝ կարելի էր կանխագուշակել անհայտ տարրերը և հետեւղականորեն հայտնագործել դրանք: Այդպես քիմիան ձեռք բերեց մի նոր՝ մաթեմատիկական ու գեղուկտիվ կառուցվածք<sup>14</sup>:

Մտքի նույն ուղղվածությանը կարելի է հետեւ կենսաբանության պատմության մեջ: Բոլոր մյուս բնական գիտությունների նման կենսաբանությունը ևս ստիպված էր սկսել փաստերի պարզ դասակարգմամբ՝ ուղղորդված մեր առօրյա լեզվի դասային հասկացություններով: Գիտական կենսաբանությունը այս հասկացություններին հաղորդել է ավելի որոշակի նշանակություն: Արիստոտելի կենդանաբանական և Թեոփրաստոսի բուսաբանական համակարգերը բարձր աստիճանի ներդաշնակություն և մեթոդաբանական կարգավորվածություն են ներկայացնում: Բայց արդի կենսաբանության մեջ դասակարգման այս բոլոր վաղեմի ձևերը մթագնվել են մեկ այլ իդեալով: Կենսաբանությունը դանդաղորեն անցում է կատարել նոր փուլի՝ «գեղուկտիվ ձևագորված տեսության»: «Յուրաքանչյուր գիտություն, — գրում է պրոֆեսոր Նորթրոպը, —

իր նորմալ զարգացման մեջ անցնում է երկու փուլ. առաջինը մենք անվանում ենք բնական պատմության փուլ, երկրորդը՝ կանխադրույթներով նախանշված տեսության փուլ: Այս փուլերից յուրաքանչյուրին հատուկ է գիտական հասկացությունների մի որոշակի տեսակ: Բնական պատմության փուլին բնորոշ հասկացության տեսակը կոչում ենք դիտարկման հասկացություն. կանխադրույթներով նախանշված փուլինը՝ կանխադրույթի հասկացություն: Դիտարկման հասկացությունը այնպիսի հասկացություն է, որի լիարժեք իմաստը ենթադրում է ինչ-որ անմիջականորեն ըմբռնելի բան: Կանխադրույթի հասկացությունը այնպիսի հասկացություն է, որի իմաստը նախանշված է գեղուկտիվ տեսության կանխադրույթներով, որին այն պատկանում է:»<sup>15</sup>

Այս վճռական քայլի համար, որ տանում է պարզապես ընկալելիից հասկանալիին, մենք մշտապես մտածողության նոր գործիքի կարիք ունենք: Մեր դիտարկումները հարկ է հարաբերակցել հմտորեն կարգավորված սիմվոլների համակարգի հետ, որպեսզի համաձայնեցնենք ու մեկնաբանենք դրանք դիտական հասկացությունների տերմիններով:

Փիլիսոփայության պատմության մեջ բավական ուշ է ի հայտ եկել այն ըմբռնումը, ըստ որի՝ մաթեմատիկան ունի-վերսալ խորհրդանշային լեզու է և զբաղվում է ոչ թե իրերի նկարագրությամբ, այլ հարաբերությունների ընդհանուր արտահայտություններով: Սույն նախադրյալի վրա հիմնված մաթեմատիկական տեսությունը ի հայտ է եկել XVII դարից ոչ շուտ: Լայբնիցը ժամանակակից առաջին մեծ մտածողն էր, որ պարզորոշ դիտակցեց մաթեմատիկական սիմվոլիզմի ճշմարիտ բնույթը և անմիջապես ցույց տվեց նրա արգասաքերությունն ու ճանաչողական հետևանքները: Այս տեսակետից, մաթեմատիկայի պատմությունը չի տարբերվում բոլոր այլ խորհրդանշային ձևերի պատմությունից: Անդամ մաթեմատիկայի համար չափազանց դժվար էր հայտնագործել խորհրդանշային մտածողության մի նոր չափում: Նման մտածողություն մաթեմատիկոսների կողմից կիրառվում էր շատ ավելի վաղ, քան նրանք կարող էին մեկնաբանել նրա յուրահատուկ արամաբանական բնույթը: Լեզվի և արվեստի սիմվոլների նման մաթեմատիկական սիմվոլները ևս ի սկզբանե պարուրված էին մի յուրատեսակ մոգական մթնոլորտով: Նրանք առաջացնում են կրոնական երկյուղաձություն և ակնածանք: Հետագայում այս կրոնական ու միստիկական հավատը դանդաղորեն վերածվում է մի տեսակ մետաֆիզիկական հավատի: Պլատոնի փիլիսոփայության մեջ թիվը այլևս պարուրված չէ գաղտնիքով: Ընդհակառակը, այն դիտարկվում է իրեւ ինտելեկտուալ աշխարհի իսկական կենտրոն. այն դարձել է բանալի ամեն ճշմարիտի ու ըմբռնելի համար: Երբ Պլատոնը ծեր տարիքում շարագրում էր իդեալական աշխարհի իր տեսությունը, փորձում էր այն նկարագրել զուտ թիվ տերմիններով: Նրա համար մաթեմատիկան միջանկյալ ոլորտ է զգայական և գերզգայական

աշխարհների միջև։ Նա ևս ճշմարիտ պյութագորական էր և, իբրև պյութագորական, համոզված էր, որ թվի զորությունը ընդգրկում է ողջ տեսանելի աշխարհը։ Սակայն թվի մետաֆիզիկական էությունը չի կարող բացահայտվել ոչ մի տեսանելի երևույթի կողմից։ Երևույթները հաղորդակից են այդ էությանը, բայց անկարող են համարժեքորեն նկարագրել այն, քանզի դա անմատչելի է նրանց։ Սխալ է բնական երևույթներում հայտնաբերված տեսանելի թվերը դիտարկել երկնային մարմինների շարժման մեջ՝ որպես ճշմարիտ մաթեմատիկական թվեր։ Այն, ինչ այստեղ տեսնում ենք, ընդամենը զուտ իդեալական թվերի «հատկանիշներն» (παραδείγματα) են։ Այս թվերը, կարելի է ըմբռնել դատողականությամբ և մտքով, բայց ոչ՝ տեսողությամբ։

«Երկնային նախշը հարկ է օգտագործել որպես նմուշ հանուն բարձրագույն իմացության։ Նրանց գեղեցկությունը նման է այն պատկերների և նկարների գեղեցկությանը, որ անթերի նկարված են Դեղալոսի կամ որևէ այլ մեծ նկարչի կողմից, որոնք մեզ վիճակվել է տեսնել։ յուրաքանչյուր երկրաչափ, ով տեսել է դրանք, պատշաճը կմատուցի նրանց հիմքանչ կատարմանը, բայց նրա մտքով անգամ չի անցնի, որ նրանցում կարող է գտնել իրական հավասարություն, կրկնօրինակ, կամ որևէ այլ ճշմարիտ համամասնություն։ [...] Եվ մի՞թե ճշմարիտ աստղագետը նույն զգացումը չի ունենում, եթե դիտում է աստղերի շարժումը։ Մի՞թե նա չի խորհում, որ երկինքը և ամեն բան երկնքում նրանց արարչի կողմից ստեղծված են միանդամայն կատարյալ ձևով։ Բայց նա երևակայել անգամ չի կարող, որ գիշերվա և ցերեկվա, կամ նրանց և ամսվա, ամսվա և տարվա համամասնությունը և կամ աստղերի ու այս ամենի, նաև միմյանց և այլ իրերի հարաբերակցությունը, որ նյութական են ու տեսանելի, կարող են լինել նաև մշտական և անխոտոր. այդ իրոք որ անհեթեթություն կլիներ, ընդ որում՝ հավասարապես անհեթեթ է նաև այդքան ջանք թափել նրանց իրական ճշմարտությունը հետագոտելու համար։»<sup>16</sup>

ժամանակակից իմացաբանությունը այլես չի ընդունում թվի պլատոնական տեսությունը։ Այն չի գիտարկում մաթեմատիկան որպես թե՛ տեսանելի և թե՛ անտեսանելի իրերի ուսումնասիրություն, այլ իրեւ հարաբերությունների և հարաբերությունների տեսակների ուսումնասիրություն։ Եթե խոսում ենք թվի օբյեկտիվության մասին, ապա ոչ իրեւ առանձին մետաֆիզիկական կամ ֆիզիկական ամբողջության մասին։ Այն, ինչ ցանկանում ենք արտահայտել, սոսկ այն է, որ թիվը գործիք է բնության և իրականության հայտնագործման համար։ Այս շարունակական ինտելեկտուալ պրոցեսի համար գիտության պատմությունը բնորոշ օրինակներ է տալիս։ Մաթեմատիկական միտքը հաճախ կարծես քայլում է ֆիզիկական հետազոտությունների առջելից։ Մեր հույժ կարեոր մաթեմատիկական տեսությունները անմիջական գործնական և տեխնիկական կարիքներից չեն բխում։ Դրանք ըմբռնվում են իրեւ մտքի ընդհանուր սինեմաներ, որ գեռես չեն ստացել կոնկրետ կիրառում։ Երբ Այնշտայնը ստեղծում էր իր հարաբերականության ընդհանուր տեսությունը, նա անդրադարձավ Ռիմանի երկրաչափությանը, որը ստեղծվել էր շատ ավելի փաղ և որը Ռիմանը համարում էր սոսկ պարզ տրամաբանական հնարավորություն։ Բայց նա համոզված էր, որ այդ հնարավորությունների կարիքն ունենք՝ իրական փաստերի նկարագրությանը նախապատրաստվելու համար։ Մենք ունենք մաթեմատիկական սիմվոլիզմի զանազան ձևերի կառուցման լիակատար ազատության կարիքը՝ ֆիզիկական միտքը իր բոլոր մտավոր գործիքներով ապահովելու համար։ Բնությունը անսպառ է. այն մեզ մշտապես նոր և անսպասելի խնդիրներ է առաջադրում։ Մենք անկարող ենք կանխատեսել փաստերը, բայց խորհրդանշային մտածողության զորության շնորհիվ կարող ենք ապահովել փաստերի մտավոր մեկնաբանությունը։

Ընդունելով այս տեսակետը՝ կարելի է գտնել ժամանակակից բնագիտության առավել դժվարին ու վիճահարույց խնդիրներից մեկի՝ դետերմինիզմի խնդրի պատասխանը։ Գիտությունը կարիք ունի ոչ թե մետափիզիկական, այլ մեթոդաբանական դետերմինիզմի։ Մենք կարող ենք հրա-

ժարվել այն մեխանիկական դետերմինիզմից, որն իր արտահայտությունն է գտել Լապլասի նշանավոր բանաձևում<sup>17</sup>: Բայց ճշմարիտ գիտական դետերմինիզմը՝ թվի դետերմինիզմը, այս առարկություններին ենթակա չէ: Թիվը այլևս չենք դիտարկում որպես միտիկական ուժ կամ իրերի մետաֆիզիկական գոյություն, այն համարում ենք իմացության յուրահատուկ գործիք: Անշուշտ, արդի ֆիզիկայի արդյունքները հարցականի տակ չեն դնում այս ըմբռնումը: Քվանտային մեխանիկայի զարգացումը մեզ ցույց է տալիս, որ մեր մաթեմատիկական լեզուն շատ ավելի հարուստ, առաձգական և ճկուն է, քան նրա կիրառումը դասական ֆիզիկայի համակարգերում: Այն հարմարվում է նոր խնդիրներին և նոր պահանջներին: Երբ Հայզենբերգը առաջադրում էր իր տեսությունը, նա օգտագործեց հանրահաշվական սիմվոլիկայի մի նոր ձև, սիմվոլիկա, որի համար մեր սովորական հանրահաշվական որոշ կանոններ կիրառելի չեն: Սակայն թվի ընդհանուր ձևը պահպանվում է բոլոր հետագա համակարգերում: Գառուն ասում էր, որ մաթեմատիկան գիտության թագուհին է, իսկ հանրահաշիվը՝ մաթեմատիկայի թագուհին: XIX դարում մաթեմատիկական մտքի զարգացման պատմական ակնարկում Ֆելիքս Ֆլայնը հայտարարեց, որ այդ զարգացման ամենա բնորոշ հատկանիշներից է մաթեմատիկայի հետևողական հանրահաշվայնացումը<sup>18</sup>: Արդի ֆիզիկայի պատմության մեջ ևս կարելի է հետեւել հանրահաշվայնացման այս պրոցեսին: Համիլթոնի քվատերնիոններից մինչև քվանտային մեխանիկայի տարբեր համակարգերը հանդիպում ենք հանրահաշվական սիմվոլիկայի ավելի ու ավելի բարդ համակարգերի: Գիտնականը գործում էր այն սկզբունքի համաձայն, ըստ որի՝ անդամ առավել բարդ գեպքերում նրան ի վերջո կհաջողվի գտնել համապատասխան սիմվոլիզմ, որը նրան թույլ կտա իր հետազոտությունները նկարագրել ունիվերսալ և բոլորի համար հասկանալի լեզվով:

Ճշմարիտ է, գիտնականը այս հիմնական ենթադրության համար որևէ արամաբանական կամ էմպիրիկ ապացույց չի ներկայացնում: Նրա միակ ապացույցը իր գործերն են:

Թվային դետերմինիգմի սկզբունքը նա ընդունում է որպես ղեկավարող կանոն, կառավարող գաղափար, որն իր գործին հաղորդում է տրամաբանական կապակցություն և համակարգային միասնություն։ Գիտական պրոցեսի այս ընդհանրական հատկանիշի լավագույն արտահայտություններից մեկը ես գտել եմ Հելմհոլցի «Կենսաբանական օպտիկայի տրակտատում»։ Եթե մեր գիտական իմացության սկզբունքները, օրինակ՝ պատճառականության օրենքը, լինեին ոչ այլ բան, քան էմպիրիկ կանոններ, ասում է Հելմհոլցը, ապա նրանց ինդուկտիվ ապացույցը խիստ կասկածելի կլիներ։ Լավագույն դեպքում, այս սկզբունքները ավելի արժեքավոր չեն, քան մետեորոլոգիայի կանոնները, ինչպես քամիների հերթագայության օրենքը և այլն։ Բայց այս սկզբունքներում ակնառու են զուտ տրամաբանական օրենքների հատկանիշները, որովհետեւ նրանցից բխող եղրահանգումները վերաբերում են ոչ թե մեր իրական փորձին և ոչ էլ պարզապես բնության փաստերին, այլ բնության մեր մեկնաբանությանը։

«Բնական երևույթներն ըմբռնելու պրոցեսն այն է, որ մենք ջանում ենք գտնել բնության ընդհանուր հասկացություններն ու օրենքները։ Բնության օրենքները սոսկ սեռային հասկացություններ են բնության մեջ կատարվող փոփոխությունների համար։ [...] Հետևաբար, երբ մենք անկարող ենք բնական երևույթները հանգեցնել օրենքի [...] այդժամ ի չիք է դառնում նման երևույթների ըմբռնման հնարավորությունն իսկ։ Այսուհանդերձ, հարկ է փորձել հասկանալ դրանք. այլ մեթոդ չկա դրանք բանականության վերահսկողության տակ առնելու համար։ Ուստի, դրանք հետազոտելիս հարկ է ելնել այն պոստուլատից, որ դրանք ճանաչելի են։ Հստ այդմ, բավարար հիմունքի օրենքը իրականում նշանակում է ոչ այլ բան, քան մղել մեր բանականության նրան, որ իր սեփական վերահսկողության տակ առնելի մեր բոլոր զգայական ընկալումները։ Սա բնության օրենք չէ։ Մեր բանականությունը ընդհանուր հասկացություններ ձեւավորելու ունակությունն է։ Այն անկարող կլիներ գործ ունենալ մեր զգայական ընկալումների և փորձի հետ, եթե չկարողանար ընդհանուր հասկացություններ կամ օրենքներ ձեւավորել։ [...] Մեր բանականությունից բացի, գոյություն չունի մեկ այլ՝ հավասար

րապես համակարգված ունակություն՝ ծայրահեղ դեպքում՝ արտաքին աշխարհը ըմբռնելու համար: Այսպիսով, եթե մենք ունակ չենք ըմբռնելու իրը, մենք անկարող ենք պատկերացնել այն իրեւ գոյություն չունեցող:»<sup>19</sup>

Այս խոսքերը անչափ պարզորոշ նկարագրում են գիտական մտքի ընդհանուր դիրքորոշումը: Գիտնականներին հայտնի է, որ գոյություն ունեն երեսույթների բազմաթիվ խմբեր, որոնք խիստ օրենքների և ճշգրիտ թվային կանոնների հանգեցնել հնարավոր չէ: Եվ այսուհանդերձ, նրանք հավատարիմ են մնում այս ընդհանուր պյութագորյան հավատամքին: Նրանք կարծում են, որ բնությունը, թե իբրև ամբողջություն և թե իր բոլոր մասնավոր ոլորտներով, «թիվ և ներդաշնակություն» է: Բնության վեհության առջև մեծ գիտնականներից շատերը հավանաբար վերապրել են այն յուրահատուկ զգացումը, որ արտահայտված է նյուտոնի նշանավոր ասույթում: Նրանք կարող էին խորհել, որ սեփական աշխատանքում իրենք նման են երեխայի, որ զբոսնում է հսկայական օվկիանոսի ափին և հիանում պատահաբար գտած գետաքարով, որի ձեն ու գույնը աչք են չոյում: Համեստության այս զգացումը լիովին հասկանալի է, բայց այն չի տալիս գիտնականի աշխատանքի ճշգրիտ ու լիարժեք նկարագիրը: Գիտնականը անկարող է հասնել իր նպատակին, առանց խստորեն հետեւելու բնության փաստերին: Մինչդեռ այս հետևելը պասսիվ հնազանդություն չէ: Բոլոր մեծ բնագետների՝ Գալիլեյի և Նյուտոնի, Մաքսվելի և Հելմհոլցի, Պլանկի և Այնշտայնի աշխատանքը սոսկ փաստերի ժողովում չէր. այն տեսական, ուստի և՝ կառուցողական աշխատանք էր: Այս ինքնաբերականությունը և արդյունավետությունը մարդկային ողջ գործունեության իրական կենտրոնն է: Սա է մարդու գերագույն ուժը և միաժամանակ մարդկային աշխարհի բնական սահմանը: Լեզվի, կրոնի, արվեստի, գիտության մեջ մարդը կարող է անել ոչ ավելին, քան ստեղծել իր սեփական ունիվերսումը, մի խորհրդանշային ունիվերսում, որ նրան հնարավորություն է տալիս հասկանալ և մեկնաբանել, համակցել և կազմակերպել, համադրել և ընդհանրացնել իր մարդկային փորձը: